

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ
ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՈՒՐԴ**

24 սեպտեմբերի 2021թ.

N 56- Լ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՅԼ
ՀԱՐՑԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) հարկային և իրավական այլ հարցերի ժամանակավոր հանձնաժողովի կանոնադրության 7.1 կետը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության հարկային և իրավական այլ հարցերի ժամանակավոր հանձնաժողովի 2021 թվականի գործունեության տարեկան ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի պաշտոնական կայքում հրապարակվելուց հետո:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ԹԱԹՈՒԼ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հավելված

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ
հաշվապահների պալատ»
հասարակական կազմակերպության խորհրդի
2021թ. սեպտեմբերի 24-ի N 56- Լ որոշման

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ»

հասարակական կազմակերպության

հարկային և իրավական այլ հարցերի ժամանակավոր հանձնաժողովի

2021 թվականի գործունեության ծրագիրը

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) հարկային և իրավական այլ հարցերի ժամանակավոր հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2021թ. գործունեության ծրագիրը (այսուհետ՝ Գործունեության ծրագիր) կազմվել է ի կատարումն Հանձնաժողովի կանոնադրության 7.1 կետի՝ նպատակ ունենալով ապահովել Հանձնաժողովի գործառույթների արդյունավետ իրականացումը և Պալատի խորհրդի կողմից Հանձնաժողովի գործունեության նկատմամբ արդյունավետ հսկողության իրականացումը:

ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ և ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Գործունեության ծրագրի հիմքում դրված են Հանձնաժողովի կանոնադրությամբ սահմանված ինչպես հիմնական («պարտադիր»), այնպես էլ այլ («ոչ պարտադիր») գործառույթները և նպատակները:

Գործունեության ծրագիրը կազմելիս նախատեսվող միջոցառումները և դրանց կատարման ժամկետները պլանավորվել են՝ ելնելով յուրաքանչյուր կոնկրետ գործառույթի բնույթից, դրա իրականացման նկատմամբ սահմանված պահանջներից և այն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցներից:

Հանձնաժողովի կողմից այլ գործառույթների իրականացման համար կոնկրետ միջոցառումներ և ժամկետներ սահմանված չեն՝ դիտարկելով դրանք որպես ընթացիկ աշխատանքներ, որոնք կիրականացվեն ըստ անհրաժեշտության:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2021ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

h/h	Գործառույթ	Միջոցառում	Ժամկետ
1	Իրավական ակտերի և դրանց նախագծերի ուսումնասիրություն և առաջարկությունների ներկայացում	Կուսումնասիրվեն ՀՀ պետական մարմինների կողմից մշակված հարկային, մաքսային, ինչպես նաև աշխատանքային և քաղաքացիական հարաբերությունները կարգավորող օրենսդրությանն առնչվող հարցերի վերաբերյալ իրավական ակտերը և դրանց նախագծերը և, ըստ անհրաժեշտության, կներկայացվեն առաջարկություններ:	Հոկտեմբեր-դեկտեմբեր Առանձին իրավական ակտերի նախագծերի համար ժամկետ նախատեսված լինելու դեպքում՝ մինչև այդ ժամկետի ավարտը
2	ՀՀ ՖՆ և ՀՀ ՊԵԿ գործող խորհուրդների նիստերում քննարկվող հարցերի և (կամ)	Կուսումնասիրվեն նիստերում քննարկվող հարցերը և (կամ) իրավական ակտերի նախագծերը և կներկայացվեն համապատասխան	Համապատասխան խորհրդի կողմից նշանակված

	իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրություն և համապատասխան առաջարկությունների ներկայացում	առաջարկություններ՝ ինչպես գրավոր, այնպես էլ նիստերին մասնակցության միջոցով:	Ժամկետներում
3	Աշխատաժողովների, կոնֆերանսների, սեմինարների և այլ միջոցառումների կազմակերպում	Պալատի անդամների մասնակցությամբ «կլոր սեղան» քննարկման կազմակերպում, որևէ հարկատեսակի կամ հարկատեսակների վերաբերյալ	Հոկտեմբեր
4	Շարունակական մասնագիտական զարգացման դասընթացների նախաձեռնում	Դասընթացների կազմակերպում՝ հանձնաժողովի անդամների կամ հրավիրված մասնագետների միջոցով	Հոկտեմբեր - դեկտեմբեր
5	Պալատի խորհրդի հանձնարարությամբ և Պալատի ներքին իրավական ակտերով նախատեսված այլ գործառույթների իրականացում	Միջոցառումներն ըստ անհրաժեշտության	Հոկտեմբեր - դեկտեմբեր

**Պալատի հարկային և իրավական այլ հարցերի
 ժամանակավոր հանձնաժողովի նախագահ՝**

Համլետ Սահակյան